ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 8 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄ

*1. Աճուրդի անցկացման օրը*՝ 2025 թվականի մայիսի 22-ին, ժամը 12-00-ին:

*2.Աճուրդի կազմակերպիչը*՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, ի դեմս համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ):

*3.Աճուրդի անցկացման վայրը /հասցեն/* ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական շենքի նիստերի դահլիճ /հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարակիկ, Մաղաքյան փողոց 1/:

*4. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են* ՝Անիի համայնքապետարանի աճաուրդային հանձնաժողովի կողմից՝ 2025 թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 16-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 17:00-ն:

*5. Աճուրդի նախավճարի չափը* ՝ մեկնարկային գնի նկատմամբ 50 տոկոս:

*6. Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն հավելման չափը* ՝ մեկնարկային գնի նկատմամբ 5 տոկոս:

*7. Աճուրդի մասնակցության վճարի չափը* 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

*8 Աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) մուտքի տոմսի վճարի չափը* 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

*9. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են* ՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,
2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը,
3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,
4) աճուրդի մասնակցության նախավճարի և մասնակցության վճարի մուծման անդորրագրերը:

*10.Աճուրդի ձևը և անցկացման կարգը* ՝ դասական եղանակ՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

*11. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:*

*12. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո10-օրյա ժամկետում:*

*13. Գույքի գտնվելու վայրը և ուսումնասիրման ժամկետը*՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Մաղաքյան փողոց 1 հասցեում գտնվող Անիի համայնքապետարանի վարչական շենքի հարևանությամբ գտնվող ավտոպարկում, ուսումնասիրության ժամկետ է սահմանված՝ 2025 թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 16-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 17:00-ն:

*14. Աճուրդի դրված գույքի /լոտի/ տվյալները, մեկնարկային գինը*

| Լոտ N | Տրանսպորտային միջոցի անվանումը, Մակնիշը | Տրանսպորտա-յին միջոցի պետհամարանիշը | Թափքի և /կամ/ նույնականացման համարը | Թողարկման տարեթիվը | Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի նկարագրությունը | Տրանսպորտային միջոցի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 1. | GAZ 24-10 | 841 GR 61 | 530172 | 1978 թ. | Շարժիչը խափանված է: Անիվները 100% մաշված են, թափքը կոռոզացված է, ընթացքային մասերը ենթակա չեն շահագործման: Սրահի մաշվածությունը 100% է, սրահը քայքայված է, մարտկոցը բացակայում է, մեքենայի հետագա շահագործումը անհնարին է: Այն ենթակա է խոտանման: | 80 000 |
| Լոտ 2. | GAZ 24-10 | 842 GR 61 | 531626 | 1994 թ. | Շարժիչը խափանված է և ենթակա չէ շահագործման: Անիվները 100 % մաշված են, թափքը ենթարկված է կոռոզիայի, ընթացքային մասերը ենթակա չեն շահագործման: Սրահի մաշվածությունը 100% է, մարտկոցը բացակայում է, մեքենայի հետագա շահագործումը անհնարին է: Այն ենթակա է | 80 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | խոտանման: | |
| Լոտ 3. | GAZ 3129 | 621 LL 11 | XTH310290T0436000 | 1996 թ. | Շարժիչը ենթակա չէ շահագործման: Անիվները 100% մաշված են, թափքը ենթարկված է կոռոզիայի, Ընթացքային մասերը ենթակա չեն շահագործման: Սրահի մաշվածությունը 100% է: Մեքենայի հետագա շահագործումը անհնարին է: Այն ենթակա է խոտանման: | 90 000 |
| Լոտ 4. | ZIL MMZ | 861 LL 70 | - | 1985 թ. | Շարժիչը ենթակա չէ շահագործման: Անիվները 100% մաշված են, թափքը կոռազացված է, ընթացքային մասերը ենթակա չեն շահագործման: Կամրջակը և թափքի ամբարձիչը ենթակա չեն շահագործման: Մեքենայի շրջանակը երեք տեղից ճեղքված է: Սրահի մաշվածությունը 100% է, մարտկոցը բացակայում է, մեքենան ենթակա է խոտանման: | 510 000 |
| Լոտ 5. | TAYOTA HARRIER | 262 LU 48 | SXU100014953 | 1999 թ. | **Մեքենայի կառավարման էլեկտրոնային համակարգը բացակայում է, անիվների մաշվածությունը 80% է, սրահի մաշվածությունը 100 % է, ընթացքային մասերը ենթակա են ամբողջովին փոփոխման, շարժիչը խափանված է, փոխանցման տուփը բացակայում է, թափքը ենթարկված է կոռոզիայի : Մեքենան ենթակա է խոտանման:** | 780 000 |
| Լոտ 6. | T-170 | 2976 LS | 2976 LS | 1988 թ. | Բացակայում է մարտկոցը, թրթուրավոր մեխանիզմը ունի 80% մաշվածություն և կոռոզացված է, սրահը և նստատեղը քայքայված վիճակում է, բացակայում են շարժիչի որոշ հանգույցներ: Տեխնիկան տարիներ շարունակ չի շահագործվել, ընթացքային մասերը ենթակա չեն շահագործման: Տրակտորը ենթակա չէ վերանորոգման՝ այն ենթակա է խոտանման: | 640 000 |
| Լոտ 7. | GAZ 3102 | 372 AX 61 | X9631020071406655 | 2007թ. | Տրանսպորտային միջոցը գտնվում է աշխատանքային վիճակում: Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են փոքր դեֆորմացված հատվածներ, ներկի ծածկույթի մասնակի վնասված հատվածներ: Մեքենայի ընթացքային մասը մաշված, շարժաբերի դետալները և հանգույցները բնականոն մաշվածքով, տեխնիկական վիճակի գնահատականը բավարար: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը բավարար: Սալոնը կտորապատ, մաշված հատվածներով, ընդհանուր վիճակի գնահատականը բավարար: | 900 000 |
| Լոտ 8. | GAZ 3110 | 776 LL 11 | 31168226 | 2003 թ. | Տրանսպորտային միջոցը գտնվում է աշխատաիքային վիճակում; Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են փոքր դեֆորմացված հատվածներ. ներկի ծածկույթի մասնակի վնասված հատվածներ: Մեքենայի տեխնիկական վիճակի գնահատականը միջին: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը միջին: Սալոնը կտորապատ, բնականոն մաշվածքով, ընդհանուր վիճակի գնահատականը միջին: | 700 000 |
| Լոտ 9. | GAZ KO-413 (GAZ-53) | 858 LL 70 | XTH531900K1175172 | 1989 թ. | Տրանսպորտային միջոցը գտնվում է աշխատաիքային վիճակում<br>Շարժիչը մասնակի նորոգման կարիք ունի, անիվները կիսամաշ: Մեքենայի իրանի արտաքին մակերևույի վրա առկա են փոքր դեֆորմացված հատվածներ. Ներկի ծածկույթի մասնակի վնասված հատվածներ: Մեքենայի տեխնիկական վիճակի գնահատականը բավարար: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը միջին:<br>Սալոնը կաշվեպատ, մաշված պատառոտված հատվածներով, ընդհանուր վիճակի գնահատականը վատ: | 560 000 |
| Լոտ 10. | VAZ 21214 | 761CR61 | XTA21214051780770 | 2005 թ. | Տրանսպորտային միջոցը գտնվում է աշխատաիքային վիճակում: Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են փտած կոռոզիայից քայքայված տեղամասեր, փոքր դեֆորմացված հատվածներ. ներկի ծածկույթի մասնակի վնասված հատվածներ: Մեքենայի ընթացքային մասի մաշված շարժաբերի հանգույցները բնականոն մաշվածքով,տեխնիկական | 750 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վիճակի գնահատականը միջին: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը բավարար: Սալոնը կտորապատ, մաշված պատառոտված հատվածներով, բացակայում են, որոշ հանգույցներ սրսիհ էլեկտրահամակարգից, ընդհանուր վիճակի գնահատականը բավարար: Գազասարք: | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ